



DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA  
ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՍԻ

Archbishop Khajag Barsamian, Primate



Թիւ 1950  
Դեկտեմբեր 22, 1994

Արժանաշնորհ  
Տ. Գարեգին Ա. Քհնյ. Գասպարեան  
Հովհաննես Ա. Յակոբ Եկեղեցւոյ  
Փըռչէս.

Սիրելի Տէր Գարեգին,

Առաջնորդարանիս կողմէ հաստատուած աւանդութեան համաձայն՝ Սրբոց  
Վարդանանց տօնին առթիւ Ս. Պատորագ կը մատուցուի Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ,  
եւ ապա ճաշկերոյթ կը տրուի Հայկ եւ Ալիս Գավորճեան հանդիսարանին մէջ եւ  
մասնաւոր յայտագիր կը գործադրուի:

Յառաջիկայ տարի Սրբոց Վարդանանց տօնը կը զուգադիպի Փետրուար 23-ին,  
Հինգշաբթի:

Անցնող տարուան նման, յառաջիկայ տարի եւս, յայտագրին իր մասնակցութիւնը պիտի  
բերէ Ս. Վարդան Մայր Տաճարի եւ շրջանի Հայ Եկեղեցիներու դպրաց դասերու  
անդամներէն կազմուած երգչախումբը՝ դեկավարութեան խմբավար Խորեն Մէյսանէճեանի:

Այս գրութեամբ կը հրաիրենք Եկեղեցւոյդ դպրաց դասի անդամները՝ որպէս զի իրենց  
մասնակցութիւնը բերեն մեր ազգային այս գլխաւոր տօնի յիշատակումին: Խմբավար Խորեն  
Մէյսանէճեան պատրաստ է Յունուար ամսուան ընթացքին այցելել ձեր համայնքը եւ  
կատարել փորձերը ձեր դպրաց դասի անդամներուն հետ:

Եկեղեցւոյդ դպրապետին հետ հաճեցէք ընտրել փորձերու համար յարմար օրերը, եւ  
երբ խմբավար Մէյսանէճեան հաղորդակցութեան մէջ մտնէ ձեզի հետ՝ տեղեկացնել անոր,  
ընելու համար անհրաժեշտ կարգադրութիւնները:

Սիրոյ ողջունի

*Խաչագ Արք. Դավիթ Առաքելակին*

ԽԱԺԱԿ ԱՐՔ. ՊԱՐՍԱՄԵԱՆ  
Առաջնորդ